

Բաց Նամակ
Պետական Ներկայացուցիչի
Ընտրության Թեկնածուներուն

Կիպրոսի Մելգոնեան Սանուց Միութեան պայքարի ռահվիրաներէն՝ Պրն. Պետրոս Գալայճեանի մեզմէ ընդմիշտ անժամանակ հեռանալու պատճառով, Կիպրահայ գաղութը լծուած է ընտրապայքարի աշխատանքներուն: Որպէս Հայկական կրօնական խումբ, Պետական նոր ներկայացուցիչի մը ընտրութիւնը տեղի պիտի ունենայ 9 Յոկտեմբերին:

Ընտրութեանց նախօրեակին, Կիպրոսի Մելգոնեան Սանուց Միութիւնը (ոչ կուսակցական կազմակերպութիւն մը) կոչ կ'ընէ բոլոր այն թեկնածուներուն, որոնք Պետական ներկայացուցչական պայքարին մասնակից պիտի դառնան, պարտին յստակօրէն յայտարարել իրենց որդեգրելիք քաղաքականութիւնը Մելգոնեանի դատին առնչութեամբ:

Համայն Մելգոնեան մեծ ընտանիքին, անցեալի եւ ներկայի ուսուցչական կազմին, պաշտօնեութեան, եւ բոլոր հայրենասէր կիպրահայերու անունով, որոնք գաղութին շահերը կուսակցութենէ, անհատականէ եւ ամէն բանէ վեր կը նկատեն, կոչ կ'ուղղեն թեկնածուներուն

- . Ճշդել թէ ի՞նչ կը ծրագրեն փրկելու համար Մելգոնեանը:
- . Ի՞նչ գործնական ծրագիր կը մշակեն իրաւագրկուած հայ ուսանողներուն համար:
- . Ինչպէ՞ս կը մտադրեն պահպանել հայոց լեզուն, պատմութիւնը եւ մշակոյթը:

Մելգոնեան Սանուց Միութեան վարչակազմը կը մտադրէ հանդիպում մը կայացնել բոլոր թեկնածուներուն հետ ականջալուր ըլլալու համար իրենց տեսակետներուն Մելգոնեանի հարցին առնչութեամբ նախքան իր թեկնածուին մասին որոշում կայացնելը:

Կիպրոսի Մելգոնեան Սանուց Միութիւն